# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/8

ք. Երևան « 24 » « 02 » 2020 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վ. Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Պեցցո» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ավետիկ Գևորգյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման և սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթ, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 634000(Վեց հարյուր երեսունչորս հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը

արկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն Պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը << Ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | «ՊԵՑՑՈ» ՍՊԸ |
| Ք. Երևան, Կառավարական տուն 2 | Հասցե՝ ՀՀ, ք. Ստեփանավան, Գ. Նժդեհի 37 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | ՀՎՀՀ՝ 06955741 |
| Հ/Հ 900011032712 | «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ |
| ՀՎՀՀ 02698732 | Հ/Հ՝ 16033017291900 |
| Գլխավոր քարտուղարի տեղակալ՝ | Տնօրեն՝ |
| _____ Վ. Գասպարյան | _____ Ա. Գևորգյան |
| /ստորագրություն/ Կ.Տ | /ստորագրություն/ Կ.Տ |

Հավելված
«24» «02» 2020թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման ժամկետը** |
| 1 | 92621110-1 | սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայություններ | **Ծառայությունը նախատեսում է «Պետական մարմինների աշխատակիցների միջև հրաձգության հանրապետական մրցույթի» (այսուհետ՝ մրցույթ) կազմակերպում:**<br>**Մրցույթի նպատակն է՝**<br>1. Հրաձգություն մարզաձևի նկատմամբ հետաքրքրության ներգրավում, զենքի ճիշտ օգտագործման, դրա հետ ճիշտ վարվելու, արագ կողմնորոշվելու ունակությունների և հմտությունների զարգացում.<br>2. Հրաձգություն մարզաձևի մասսայականացում:<br><br>Ծառայությունը նախատեսում է մրցույթի անցկացման և փակման արարողության կազմակերպում:<br>Մրցույթն անցկացվելու է մեկ փուլով, տևելու է 2 օր՝ ժամկետը նախապես համաձայնեցնելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության քաղաքականության վարչության (այսուհետ՝ ՄՍՖԴՔՎ) հետ համաձայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թվականի նոյեմբերի 27-ի N 1091 Ա/2 հրամանով հաստատված կանոնակարգի (այսուհետ՝ կանոնակարգ՝ «Նապար Արմս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հրաձգարանում (հասցե՝ Երևան, Մամիկոնյանց փող. 60/1): Կանոնակարգին հնարավոր է ծանոթանալ ՄՍՖԴՔՎ դիմելով:<br><br>Մրցույթի ընթացքում անհրաժեշտ են հետևյալ պարագաները՝ | դրամ | 634000 | 1 | Ոչ շուտ քան պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում, մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 30-րդ օրացուցային օրը |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 1. 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված հրաձիգներին և կազմակերպություններին պարգևատրելու համար մրցանակներ՝<br>•Հավաստագիր՝ թղթապանակով հավաստագիր, չափսը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ: Տեքստը համաձայնեցնել ՄԱՖԴՊՎ հետ՝ 12 հատ (Օրինակելի ձևերը կցվում են)<br>•Շնորհակալագիր՝ թղթապանակով հավաստագիր, չափսը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ: Տեքստը համաձայնեցնել ՄԱՖԴՊՎ հետ՝ 12 հատ (Օրինակելի ձևերը կցվում են)<br>•Հուշանվերներ՝ 1-10-րդ տեղ գրաված մասնակիցներին (տղամարդիկ, կանայք): Հուշանվեր – պատրաստված օրգանական ապակուց, պատվանդանով, բարձրությունը 15-20 սմ, պատվանդանի վրա փորագրված մրցաշարի տեքստը՝ վերջնական տեսքը համաձայնեցնելով ՄԱՖԴՊՎ հետ՝ 20 հատ<br>•Մեդալներ. չափսը՝ 5-6 սմ տրամագծով x 0,3 սմ հաստությամբ, մետաղե ձուլածո, եռագույն ժապավենով՝ 0,80 սմ երկարությամբ, սինթետիկ հումքից՝ 6 հատ<br>•Մարզահագուստ ՝ մարզական կոստյում՝ տաբատ և բաճկոն՝ մարզումների ու մրցումների համար: Չափսերը 46-ից-54 համարի: 100% պոլիէսթեր, կոստյումի բաճկոնը շղթայով բացվող: Համազգեստի գունային գամման համաձայնեցնելով ՄԱՖԴՊՎ հետ, (տղամարդիկ, կանայք): 6 հատ<br>• Հուշանվեր՝ (Գավաթ) 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված կազմակերպությունների համար՝ 50 սմ, 55 սմ և 40 սմ բարձրությամբ, ոսկեգույն, էբոնիտե պատվանդանով: Տեսքը համաձայնեցնել ՄԱՖԴՊ վարչության հետ՝ 6 հատ<br>• Հուշանվեր՝ (Գավաթ) 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված հրաձիգների համար՝ 40 սմ, 35 սմ և 30 սմ բարձրությամբ, ոսկեգույն, էբոնիտե պատվանդանով: Տեսքը համաձայնեցնել ՄԱՖԴՊ վարչության հետ՝ 6 հատ<br>• Անհատական մրցանակ 1-ին տեղը գրաված մասնակիցների (տղամարդ և կին) համար. օդամղիչ հրացան, կամ օդամղիչ ատրճանակ՝ հրացանի տրամաչափը 4,5 մմ, տեսակը՝ օդամղիչ, լիցքավորումը՝ մեկ լիցքով, քաշը՝ 4,6 կգ, երկարությունը 1240մմ, փողի երկարությունը 500 մմ, հրացանի կոթը՝ փայտե, փողի ուժը նվազագույնը 30 ջոուլ՝ 2 հատ<br>• Ֆոտո լուսանկարահանում և տեսանկարահանում:<br>3 օր | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 2. Մրցավարական հանձնաժողովի և մրցավարների աշխատանքները ապահովելու համար գրենական պիտույքներ՝<br>• Թղթե արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով,<br>A4 (210 x 297 մմ) ձևաչափի թերթերի համար:<br>20 հատ<br>• Թուղթ A4 չափի 1 (21 x 29.7), չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ2 (210 x 297) մմ՝ 2 տուփ<br>• Թղթապանակ (ռեգիստրատոր)՝ 2 օղակով, պլաստիկ, լայնությունը՝ 80 մմ, A4 չափի 10 հատ<br>• Գրիչ գնդիկավոր. տարբեր գույների, տարբեր տեսակի կտրուցվածքներով, մեծ և փոքր չափսերի 10 հատ<br>• Մատիտ, գրաֆիտե միջուկով, հասարակ, սև, համապատասխան կարծրությամբ 10 հատ<br>• Ապակարիչ. գրասենյակային ապակարիչ՝ N 10 ասեղներով կարված թղթերը քանդելու համար 1 հատ:<br>Մրցավարական հանձնաժողովը բաղկացած է 12 անձից, մրցավարական հանձնաժողովին ցուցակը տրամադրում է ՄՍԾԴՔ վարչությունը: Մրցույթի ընթացքում մրցավարական հանձնաժողովին տրամադրվում է սնունդ:<br>Սնունդը՝ ճաշ (հաց, աղցան երկու տեսակի, պանիր, ապուր, հիմնական ուտեստ խավարտով (երկու տեսակ՝ ըստ ընտրության), ջուր, զովացուցիչ ըմպելիք) թեյ, սուրճ):<br>• Գլխավոր մրցավարական հանձնաժողովի սնունդ, 4 օր, 2 գլխավոր մրցավար՝ օրը մեկ անգամյա սնունդ,<br>• Մրցավարների սնունդ, 2 օր, 10 մրցավար՝ օրը մեկ անգամյա սնունդ:<br>*Ծանոթություն. Մրցավարների սնունդ համար նախատեսված գումարը, կարող է տրամադրվել նաև մրցավարներին առձեռն, գումարի չափը նախապես համաձայնեցնելով ՄՍԾԴՔվ հետ:<br><br>Մրցույթի ավարտից առնվազն 5 օր հետո (օրը համաձայնեցնել ՄՍԾԴՔվ-ի հետ) պետք է կազմակերպվի փակման հանդիսավոր արարողություն:<br>Մրցույթի հանդիսավոր փակման արարողությունը պետք է տեղի ունենա՝<br>• 100-120 մարդու համար նախատեսված կոնֆերանս դահլիճում կահավորված նստատեղերով: | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | • Դահլիճը պետք է կահավորված լինի սեղաններով՝ առնվազն 3 հատ՝ արարողության մասնակից պատվավոր հյուրերի համար,<br>• Դահլիճը պետք է ունենա վարողի համար խոսափարթակ,<br>• Հարմարեցված սեղաններ կամ հարմարեցված տեղ՝ մրցույթի հավաստագրերը, գավաթները և նվերները տեղադրելու համար,<br>• Հյուրերի սեղաններին՝ ջրեր և բաժակներ,<br>• Բեմի առկայությունը կարևոր չէ,<br>• Ձայնային տեխնիկայի ափահովում փակման արարողությունը վարելու համար՝ Բեմական բարձրախոս-- 1 հատ (Հզորություն 500 W, ձայնի ճնշում-133db, հաճախականություն-65Hz-12KHz)<br>• Ձայնի կառավարման վահանակ Yamaha LS-9-32 - /կամ համարժեք/ 1 հատ (32 մուտք ներքին էֆֆեկտներով, էկվալայզերով և դինամիկ պրոցեսորներով)<br>• Արարողության տևողությունը 1.5-2 ժամ:<br><br>Մասնակիցը պետք է ապահովի հաղորդավարի ծառայություն՝ մրցումների ավարտից հետո մրցանակակիրների պարգևատրման արարողությունը կազմակերպելու համար:<br>*Ծրագրի հետ կապված բոլոր աշխատանքները համաձայնեցնել նախարարության ՄԱՖԴՔ վարչության հետ) | | | | |

* *Ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան փետրվար դեկտեմբերի 25-ը:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն**
**Ք. Երևան, Կառավարական տուն 2**
**ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011032712**
**ՀՎՀՀ 02698732**
**Գլխավոր քարտուղարի տեղակալ՝**

**Վ. Գասպարյան**
/ստորագրություն/ Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
**«ՊԵՑՑՈ» ՍՊԸ**
**Հասցե՝ ՀՀ, ք. Ստեփանավան, Գ. Նժդեհի 37**
**ՀՎՀՀ՝ 06955741**
**«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ**
**Հ/Հ՝ 16033017291900**
**Տնօրեն՝**

**Ա.Գևորգյան**
/ստորագրություն/

Հավելված
«24» «02» 2020թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Չափաբաժին | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Ծառայության անվանումը | Ենթակա է վճարման ՀՀ 2020թ պետական բյուջեից | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 1-ին եռամսյակ | | | 1-ին կիսամյակ | | | 9 ամիս | | | տարի | | | Ընդամենը |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր, մինչև 20-ը | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| 1 | 92621110-1 | սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայություններ | | | 634000 | 634000 | 634000 | 634000 | 634000 | 634000 | 634000 | 634000 | 634000 | 634000 | 634000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն**
**Ք. Երևան, Կառավարական տուն 2**
**ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011032712**
**ՀՎՀՀ 02698732**
**Գլխավոր քարտուղարի տեղակալ՝**

_____ Վ. Գասպարյան
/ստորագրություն/ Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
**«ՊԵՑՑՈ» ՍՊԸ**
**Հասցե՝ ՀՀ, ք. Ստեփանավան, Գ. Նժդեհի 37**
**ՀՎՀՀ՝ 06955741**
**«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ**
**Հ/Հ՝ 16033017291900**
**Տնօրեն՝**

_____ Ա.Գևորգյան
/ստորագրություն/ Կ.Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

1

_____

_____

_____

_____

_____

ՆԱԽԱՐԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«____» _____ 2020թ.

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

2

_____

_____

_____

_____

_____

ՆԱԽԱՐԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«____» _____ 2020թ.

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

3

_____

_____

_____

_____

_____

ՆԱԽԱՐԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«____» _____ 2020թ.

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ

ՏՐՎՈՒՄ Է

_____

_____

_____

_____

_____

ՆԱԽԱՐԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

_____ «____»_____ 2020թ.